

Տեքստը՝ Ռոբի Գ. Հարրիսի, նկարները՝ Մայքլ Էմբերլիի

ԵՎ ՉՐՈՒՑԵՆՔ ԱՅՂԴ Մասին



ԱՂՋԻԿՆԵՐԻ, ՏՂԱՆԵՐԻ, ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ, ԸՆՏԱՆԻՔԻ
ՈՒ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ



ՄԻ ԶԱՆԻ ԽՈՍՔ ԾՆՈՂՆԵՐԻՆ, ՈՍՍՈՒՅԻՉՆԵՐԻՆ,
ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՐՆԵՐԻՆ, ԲՈՒԺՔՈՒՅՐԵՐԻՆ,
ԲԺԻՇԿՆԵՐԻՆ, ԶԱՀԱՆԱՆԵՐԻՆ ԵՎ ԲՈԼՈՐ
ՆՐԱՆՅ, ՈԿՔԵՐ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ՀԵՏ, ՀՈԳ ՏԱՆՈՒՄ ՆՐԱՆՅ ՄԱՍԻՆ ՈՒ ՆՐԱՆՅ
ՀԵՏ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՅԿԱՅՆՈՒՄ:

Փոքրիկներին հետաքրքիր է իրենց մարմինն ու այն, թե ինչպես են նրանք լույս աշխարհ եկել: Նրանցից շատերը անհամար թվով հարցեր կարող են տալ այդ թեմաներով: Նրանք հարցնում են՝ ինչո՞վ են իրենք տարբերվում մյուս մարդկանցից, ի՞նչ տարբերություն կա աղջիկների և տղաների միջև, ինչպե՞ս են կոչվում մարմնի մասերը, որտեղի՞ց են հայտնվում երեխաները, ի՞նչ է ընտանիքը և այլն: Այս հարցերից ոմանց պատասխանելը շատ հեշտ է, իսկ ոմանց՝ շատ դժվար:

Մենք ստեղծել ենք այս գիրքը, որպեսզի պատասխանենք այդ բազմազան հարցերին: Մենք գրուցել ենք ծնողների, ուսուցիչների, գրադարանավարների, բուժքույրերի, բժիշկների, սոցիալական աշխատողների, հոգեբանների, գիտնականների ու քահանաների հետ, որպեսզի գրքում առկա նյութը համապատասխանի փոքրիկի տարիքին և այդ նյութը դառնա ավելի ակտուալ ու ճիշտ՝ գիտական տեսանկյունից :

Շատերը մեզ հարցնում են, ինչպե՞ս երեխաների հետ ընթերցենք այս գիրքը: Այդ հարցին միանշանակ պատասխան տալ հնարավոր չէ: Որոշ երեխաներ կցանկանան այս գիրքն ընթերցել բարձրաձայն՝ ծնողների հետ միասին, որոշները միայն գրքի որոշ հատվածներ կկարդան, որպեսզի գտնեն իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները, իսկ ոմանք էլ, միգուցե, որոշեն լրիվ միայնակ կարդալ գիրքը:

Մենք հույս ունենք, որ մեր գիրքը կօգնի Ձեզ պատասխանել ցանկացած անհարմար, բայց լիովին նորմալ մանկական հարցերին:

Ռոբի Գ. Յարրիս և Մայքլ Էմբերլի, հունվար, 2006թ.

Տեքստը՝ Ռոբի Գ. Չարրիսի, նկարները՝ Մայքլ Էմբերլիի

ԵՎ ՉՐՈՆՑԵՆՔ ԱՅՂ ՄԱՍԻՆ



ԱՂՋԻԿՆԵՐԻ, ՏՂԱՆԵՐԻ, ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ, ԸՆՏԱՆԻՔԻ
ՈՒ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ

Ն Ա Ռ Ա Բ Ա Ն

Որտեղի՞ց են հայտնվում երեխաները: Այսպիսի անհարմար հարցերով փոքրիկները սկսում են անհանգստացնել ծնողներին, երբ դառնում են 4-5 տարեկան: Սկզբնական շրջանում նրանց լիովին բավարարում է «արագիլն է բերել», «խանութից ենք գնել», «կաղամբի միջից ենք գտել» տիպի պատասխանները: Սակայն, աստիճանաբար մեծանալով, փոքրիկն ավելի ու ավելի է ծնողին փակուղու առաջ կանգնեցնում իր հարցերով:

Ի՞նչ պատասխանել երեխային, երբ նա, նայելով հղի մայրիկի լուսանկարին, հարցնում է, թե ինչպե՞ս է հայտնվել մայրիկի փորիկի մեջ: Կամ հարցնում է, թե ինչո՞վ են աղջիկները տարբերվում տղաներից: Կամ, ի վերջո, հետաքրքրվում են, թե ի՞նչ է նշանակում պատահականորեն լսված «սեքս» բառը:

Ծնողներին հաճախ նման հարցերը անհարմար դրության մեջ են դնում ու ստիպում ամաչել: Նրանցից շատերը սկսում են հեքիաթներ հորինել կամ փոխում են խոսակցության թեման՝ անպատասխան թողնելով երեխաներին: Թվում է, թե մեր մենթալիտետի համար դա նորմալ է: Ու նման դեպքերում բերվում է փաստարկ, թե՛ «դեռ վաղ է նման բաներ իմանալը, թող նախևառաջ մեծանան»:

Սակայն, կան բաներ, որոնք երեխան պետք է իմանա արդեն նախադպրոցական տարիքից: Միգուցե դուք դրա մասին չեք մտածել, բայց արդեն փոքր տարիքից աղջիկներն ու տղաները պետք է իմանան, թե մեծահասակների կողմից ո՞ր գործողություններն են անթույլատրելի, կարելի է՞ արդյոք ուրիշ քեռիներին ու մորաքույրներին և նույնիսկ իրենց հասակակիցներին ձեռք տալ իրենց ինտիմ հատվածներին, և պե՞տք է արդյոք այդ մասին պատմեն իրենց ծնողներին: Պատահում է, որ երեխան տարիներով հանդուրժում է բռնությունը, սակայն չի գիտակցում դա: Պարզապես նրան չեն բացատրել՝ ի՞նչն է լավ և ի՞նչն է վատ, որ չպետք է լռեն, ինչքան էլ սպառնան ու համոզեն, որ դա «փոքրիկ գաղտնիք» է: Երեխան պե՛տք է տեղեկացված լինի, որպեսզի իրենց նեղացնողին կարողանա հակահարված տալ կամ ժամանակին ձեզնից օգնություն խնդրի:

Այս գրքի վրա աշխատել են բազմաթիվ մարդիկ՝ պրոֆեսորներ, բժշկական գիտությունների թեկնածուներ, հոգեբանների, մանկավարժներ, շարքային դաստիարակներ, գրադարանավարներ, մայրիկներ ու հայրիկներ, պապիկներ ու տատիկներ: Յեղիևակները փորձել են իրենց աշխատանքը հնարավորինս մատչելի ներկայացնել՝ չնայած դրանց գիտական եզրերին: Նրանք պարզ ու բավականին ճիշտ պատմում են, թե ինչն՞վ են տարբերվում տղաներն ու աղջիկները, ինչպե՞ս են նրանք մեծանում, ի՞նչ է ձվաբջիջն ու սպերմատոզոիդը, ինչպե՞ս է տեղի ունենում բեղմնավորումը, ինչպե՞ս է ծնվում երեխան: Գրքի որոշ փաստեր հետաքրքիր կլինեն նաև ծնողների համար:

Գրքում քննարկվում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ ընտանիքը, որդեգրումը, ինչպե՞ս օգնել նորածին ունեցող մայրիկներին, ո՞վ է ընկերը, ինչպե՞ս ճիշտ հարաբերություններ կառուցել նրա հետ և այլն:

Թերթելով այս էջերը, միգուցե մտածեք, որ դեռ վաղ է երեխայի համար այս ամենը, միգուցե 8-10 տարեկանում նոր պետք է նրան ծանոթացնել սրան: Վերջնական որոշումը ձերն է: Բայց ցանկալի է, որ հնարավորինս շուտ երեխան ծանոթանա այսպիսի կարևոր հարցերին: Միշտ էլ վտանգ կա, որ երեխան այլ տեղերից կստանա նմանատիպ ինֆորմացիա, որը կլինի աղճատված ու անցանկալի մանրամասներով:

Եթե դուք պատրաստ չեք գրքի առաջին գլուխներից սկսել զրուցելը փոքրիկի հետ, սկսեք վերջին էջերից, որտեղ պատմվում է երեխայի սեռական անվտանգության մասին: Դիմեք գրքին ամեն անգամ, երբ փոքրիկը հարցախեղդ կանի փակուղի գցող հարցերով: Կարող եք միայն փոքրիկ հատվածներ կարդալ գրքից՝ փորձելով պատասխանել երեխայի հարցերին:

Եթե երեխան արդեն կարդալ գիտի, տվեք, թող ինքը թերթի գիրքը: Գրքի հետաքրքիր նկարազարդումն ավելի մատչելի կդարձնի գրքի ասելիքը:

Գրքի բովանդակությունն ուղեկցվում է փոքրիկ հերոսների՝ կանաչ թուրակի ու փոքրիկ, բայց խելացի մեղվիկի երկխոսություններով, որոնցում քննարկում են ստացված տեղեկությունները:

Գրքի հեղինակները հույս ունեն, որ այն կօգնի ձեզ, երեխային լուսավորել: Չէ՞ որ «անհարմար» հարցերին պատասխանելը նույնքան բնական է, որքան այդ հարցերը տալը:

Մանկաբույժ՝ Տատյանա Բուցկայա



Էլ չեմ դիմանում,
ուզում եմ ամեն
ինչ իմանալ:

Իսկ ես
կհամբերեմ...



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թուրքակն ու մեղուն
գնում են
Կենդանաբանական այգի
8-9

Այնքան շատ հարցեր կան
10-11

Ի՞նչ են անում տղաներն
ու աղջիկները
12-13

Նո՞ւյնն են, թե՞ տարբեր
14-15

Ոտքից գլուխ
16-17

Գլխից մինչև ոտնաթաթ
18-19

Ի՞նչ ունեն տղաները
20-21

Ի՞նչ ունեն աղջիկները
22-23

Աղջիկներն ու տղաները
մեծանում են
24-25

Ի՞նչ շատ են ծվաբջիջները:
Ի՞նչ շատ են
սպերմատազոիդները
26-27

Երեխաներին արագիլը չի
բերում
28-29

Մեծ նավարկություն
30-31

Մեծացող արգանդ
32-33

Գնդասեղի ծայրից մինչև
ձմերուկ
34-35

Պորտալարը
36-37

Ինչո՞վ է զբաղված
պտուղը
38-39

Տղա՞, աղջի՞կ
Մե՞կ երեխա, թե՞ ավել
40-41

Ծնունդդ շնորհավոր
44-45

Գրկախառնություն ու
համբույրներ
46-47

Ընտանիքների տեսակները
48-49

Լավ և վատ հպումներ
50-51

Տղաներ, աղջիկներ,
ընկերներ
52-53

Մեծանում ենք
54-55

Հավատա
56

Գնանք
կենդանաբանական
այգի ու գետածիերին
նայենք:





Իսկ ես շատ եմ
ուզում միջատներին
նայել:



ԹՌՉՈՒՆՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ ԳՆՈՒՄ ԵՆ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ







Երեխաներն
ամենուր
են:

ԱՅՆՔԱՆ ՇԱՏ ՀԱՐՑԵՐ ԿԱՆ ...




Ընտանիքներն
ամենուր
են:



Դու, հավանաբար, տեսել ես տարբեր ընտանիքներ՝ քոնը, զարմիկի ընտանիքը, ընկերների ընտանիքը, հարևանի, կատունների, շների, խոզուկների, գետաձիերի, ձիերի կամ փղերի ընտանիքը: Բոլոր ընտանիքներում գրկում, սիրում ու փայփայում, կերակրում են երեխաներին, խաղում նրանց հետ ու հոգ տանում նրանց մասին:

Օվվացող
թռչնիկներն
ամենաքնքուշ
փոքրիկներն են:

Բզզացող
մեղվիկներն
ամենաքնքուշ
փոքրիկներն են:



Միգուցե դու բազմաթիվ հարցեր ունես, որտեղի՞ց են հայտնվել այդ բոլոր երեխաները, ինչպես նաև, որտեղի՞ց են հայտնվել դու և ինչպե՞ս են ծնվել:



Միգուցե, քեզ համար հետաքրքիր է, թե ինչո՞վ են տարբերվում և ինչո՞վ են նման միմյանց աղջիկներն ու տղաները:

Այսպիսի հարցեր տալով, դու աշխարհի մասին ավելի շատ բան կիմանաս: Հարցրու այդ մասին մայրիկին, հայրիկին, մորաքրոջը, հորեղբորը, տատիկին կամ պապիկին, բուժքրոջը կամ բժշկին, ու դու կգտնես քո բոլոր հարցերի պատասխանները:

Այդ մասին դու կարող ես ինքնուրույն կարդալ նաև այս գրքում, կամ կարող ես խնդրել դայակին, ուսուցչուհուն կամ մեկ այլ հարազատ մարդու, որպեսզի այս գիրքը նա կարդա քեզ համար բարձրաձայն: Եվ դու կստանաս քեզ հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները:



Նույնիսկ ամենափոքրիկ տղաներն ու աղջիկները տարբերվում են իրարից:

Բայց նրանք այնքան նման են:

ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՏՂԱՆԵՐՆ ՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԸ



Աղջիկները ծուկ են որսում, հավաքում են որդեր ու բռնում բզեզներ:



Տղաները նույնպես:

Տղաները մեծ ու ուժեղ մկաններ ունեն:



Աղջիկները նույնպես



Աղջիկները խաղում են տիկնիկներով ու փափուկ արջուկներով:



Տղաները նույնպես:

Տղաները խաղում են գնացքներով, ինքնաթիռներով ու բեռնատարներով:



Աղջիկները նույնպես

Աղջիկները երգում ու պարում են:



Տղաները նույնպես:





Տղաներին ու աղջիկներին կարելի է տարբերել մարմնի կառուցվածքով ու որոշ օրգաններով: Նրանք հիմնականում իրար նման են, բայց ամբողջությամբ:

Աղջիկներն ու կանայք հեշտոց ունեն (տես՝ էջ 22): Տղաներն ու տղամարդիկ առնանդամն ունեն (տես՝ էջ 19): Չենց այդ յուրահատկություններով էլ տարբերվում են կանանց ու աղջիկների մարմինը տղամարդկանց ու տղաների մարմիններից:

Մարմնի որոշ մասեր արտաքին են: Սովորաբար այդ մարմնի մասերը ծածկվում են ներքնազգեստով, լողազգեստով, իսկ նորածինների դեպքում՝ տակաշորերով:



Այդ օրգաններից որոշները ՆԵՐՔԻՆ են: Դրանք, որոնք գտնվում են մարդու ՆԵՐՍՈՒՄ, հնարավոր չէ տեսնել:

Ես ունեմ մի գլուխ, երկու թև, մեկ մարմին ու երկու ոտք:

Քո մարմնի մասերը շատ քիչ են:



Տղաների ու աղջիկների միջև մի տարբերությունն էլ այն է, թե ինչպես են նրանք օգտվում զուգարանակոնքից: Դա կապ ունի նրանց մարմնի կառուցվածքների տարբերությունից: Տղաների մոտ չիշիկը դուրս է գալիս փոքրիկ անցքից, որը գտնվում է առանդամի ծայրին: Իսկ աղջիկների չիշիկը դուրս է գալիս ոտքերի արանքում գտնվող փոքրիկ անցքից:

Հենց այդ պատճառով է աղջիկներն ու կանայք չիշիկ են անում զուգարանակոնքին նստած, իսկ տղաներն ու տղամարդիկ՝ կանգնած: Բայց փուֆիկ անելուց թե՛ տղաները, թե՛ աղջիկները նստում են զուգարանակոնքին:



Չիշիկ անել, փուֆիկ անել... ինձ դուր են գալիս այս բառերը: Դրանք ծիծաղելի են:

Հիմարություն: Բոլորն էլ չիշիկ ու փուֆիկ անում են:



Փոքրիկ աղջիկները, կանայք ու տատիկները պատկանում են իգական սեռին, իսկ տղաները, տղամարդիկ ու պապիկները՝ արական սեռին:




Տղաներն ու աղջիկները
ունեն նույն մարմնի
մասերը

Ճիշտ է: Թե տղաների,
թե աղջիկների ոտքերի
վրա մատներ կան:



ՈՏՔԻՅ ԳԼՈՒԽ

Աղջիկներ





Կտուց


Հիմա ես գիտեմ մարմնի բոլոր մասերի անվանումները:

Իսկ ես գիտեմ, որ մեղու եմ:



Խայթ

Տղաներ



Գլուխ

Մազեր

Վիզ

Ուս

Մեջք

Արմունկ

Ձեռք

Դաստակ

Թաթ

Ձեռքի մատներ

Բութ մատ

Հետույք

Հետանցք

Ոտք

Սրունք

Կոճ

Ոտքի մատներ



Կրունկ

Ոտնաթաթ

Ռեզինից կետածուկ

Գոտկատեղ Ազդր

Ծունկ


Տղաներն ու աղջիկները
ունեն նաև տարբեր
մարմնի մասեր:

Մեղուներն ունեն
խայթ, իսկ
թռչունները՝ կտուց:



ԳԼԽԻՑ ՄԻՆՉԵՎ ՈՏՆԱԹԱԹ

Աղջիկներ





Թև

Հիմա ես ավելի շատ մարմնի մասերի անվանումներ գիտեմ:

Թև

Գլուխ

Իսկ ես գիտեմ, որ քո անունը Թռչուն է:




Թև

Թև

Մազեր

Տղաներ



Ձեռք

Կրծքավանդակ

Պտուկ

Փոր

Պորտ

Առնանդամ

Ամորձապարկ

Ազդր

Վիզ
Ուս

Բուրբ մատ

Ձեռքի մատներ

Թաթ

Դաստակ

Արմունկ

Գոտկատեղ

Ոտք



Ծունկ

Սրունք

Ոտնաթաթ



Նավ

Ոտքի մատներ



Այսինքն տղաները,
տղամարդիկ ու պապիկները
Նույն մարմնի մասերը
ունեն:

Բոլոր մեղուններն ու
թռչունները ոտքեր
ունեն:



Ի՞նչ ունեն Տղաները

Տղաները ծնվում են յուրահատուկ
մարմնի մասերով, որոնք լինում են
թե արտաքին և թե ներքին:
Արտաքին Յուրահատուկ մարմնի
մասերից են՝ առնանդամն ու
ամորձապարկ, որոնք տեղադրված են
տղաների ու տղամարդկանց ոտքերի
արանքում: Այդ իսկ պատճառով դրանք
հեշտ է նկատել: Աղջիկներն ու կանայք
Նման օրգաններ չունեն:
Նույն տեղում ոտքերի արանքում,
տղամարդիկ ունեն երկու անցք
միզուղի (որտեղից չիժիկ են անում)
և հետանցք (որտեղից կղանքն է
դուրս գալիս): Աղջիկներն ու կանայք
ևս ունեն այս անցքերը:

Ամորձապարկը բարակ կաշվով պատված
փափուկ պարկ է, որի ներսում
գտնվում են երկու ամորձիները:
Առնանդամը գտնվում է ամորձապարկի
առջևում: Երբեմն առնանդամը
պնդանում ու մեծանում է: Դա տեղի է
ունենում էրեկցիայի ժամանակ: Բոլոր
տղաների, պատանիների ու
տղամարդկանց մոտ էրեկցիա
տեղի է ունենում:
Առնանդամի ծայրին գտնվող
փոքրիկ անցքը, որտեղից
դուրս է գալիս մեզը,
կոչվում է միզանցք:
Կղանքը դուրս է գալիս
հետանցքից: Այն հնարավոր է
տեսնել միայն
հայելու միջոցով:

- Առնանդամ
- Միզանցք
- Ամորձապարկ



Տղամարդու մարմնի ներսում գտնվում են երկու ամորձիները և երկու սերմնարանները: Կանանց մարմնում դրանք չկան: Միզուղիները և միզապարկը ևս գտնվում են տղաների և տղամարդկանց մարմնի ներսում: Կանայք և աղջիկները ևս ունեն այս օրգանները:


Փոքրիկ տղաների մոտ յուրաքանչյուր ամորձի խաղողի հատիկի չափ է: Իսկ սերմնածորանները նման են երկու եփված երկար սպագետտիի:

Մեզը առնանդամի մեջ գտնվող միզուղիների միջոցով միզապարկից հասնում է միզանք: Հենց այդ անցքով էլ մեզը դուրս է գալիս մարմնի միջից:


Առնանդամի ծայրում գտնվող կաշին կոչվում է թլիպ: Որոշ տղաների թլիպները հեռացնում են թլպատում են, ծնվելուց մի քանի օր հետո: Մյուսների մոտ դրան ձեռք չեն տալիս: Այդ պատճառով առնանդամները կարող են տարբեր տեսք ունենալ:



Զթլպատված
առնանդամ
(ծայրին ունի թլիպ)



Թլպատված
առնանդամ
(ծայրի թլիպը չկա)



Միզապարկ

Միզուղի

Սերմնածորաններ

Առնանդամ

Ձու

Ձու

Աղջիկներն ու կանայք
ունեն նույն մարմնի
մասերը:

ԲՈՂՈՐ թռչուններն
ու մեղուները
թևեր ունեն:

Ի՞ՆՉ ՈՒՆԵՆ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Աղջիկները ծնվում են յուրահատուկ մարմնի մասերով, որոնք լինում են թե արտաքին և թե ներքին: ԱՐՏԱՔԻՆ յուրահատուկ մարմնի մասերից են՝ սեռական շուրթերը, հեշտոցի անցքն ու ծլիկը, որոնք տեղադրված են աղջիկների ու կանանց ոտքերի արանքում: Այդ իսկ պատճառով դրանք տեսնելը դժվար է: Տղաներն ու տղամարդիկ նման օրգաններ չունեն: Նույն տեղում ոտքերի արանքում, կան ուրիշ երկու անցք միզուղի (որտեղից չիշիկ են անում) և հետանցք (որտեղից կղանքն է դուրս գալիս): Տղաներն ու տղամարդիկ ևս ունեն այս անցքերը:

ՍԵՌԱԿԱՆ ՇՈՒՐԹԵՐԸ նուրբ կաշվով պատված հատված է, որը գտնվում է աղջիկների և կանանց ոտքերի արանքում:

Սեռական շուրթերի մեջ փոքրիկ, ոլոռի մեծության կաշվե բլթակ կա, որը կոչվում է ԾԼԻԿ:

Բացի այդ, սեռական շուրթերի արանքում գտնվում է երկու փոքրիկ անցքեր միզանցքը, որտեղից դուրս է գալիս մեզը, և հեշտոցի անցքը:

Կղանքը դուրս է գալիս հետանցքից: Այն հնարավոր է տեսնել միայն հայելու միջոցով:




Կանանց յուրահատուկ ներքին օրգաններից են երկու ձվարանները, երկու արգանդափողերը, արգանդն ու հեշտոցը: Տղամարդիկ ու տղաները այս օրգաններից չունեն:

Մյուս երկու օրգանները՝ միզուղիներն ու միզապարկը ևս գտնվում են աղջիկների և կանանց մարմնի ներսում: Տղաներն ու տղամարդիկ ևս ունեն այս օրգանները:

Փոքրիկ աղջիկների մոտ ՁՎԱՐԱՆՆԵՐԸ խաղողի հատիկի չափ են: ԱՐԳԱՆԴԱՓՈՂԵՐԻ տրամագիծով նման են հյուսի ձողիկների: ՀԵՇՏՈՅԸ Էլաստիկ խողովակ է, որը արգանդը կապում է սեռական շուրթերին:

Սեզը մարմնի միջից դուրս է գալիս միզանցքի միջոցով, որը գտնվում է միզուղիների վերջում՝ սեռական շուրթերի արանքում:



Արգանդափողեր

Ձվարան

Ձվարան

Արգանդ

Միզապարկ

Հեշտոց

Միզուղի

Մարմնի մասերի անուններն իմանալը...



ՆՈՐՄԱԼ ԵՐԵԿՈՒՅԹ Է





Ես ուզում եմ մեծանալ:


ԱՂՋԻԿՆԵՐՆ ՈՒ ՏՂԱՆԵՐԸ ՄԵԾԱՆՈՒՄ ԵՆ

Իսկ ես չեմ ուզում փոխվել:




Երբ տղաներն ու աղջիկները մեծանում են, նրանց մարմինները փոփոխվում ու նմանվում են մեծահասակ մարդկանց մարմիններին: Մեծահասակների ՆԵՐՔԻՆ և ԱՐՏԱՔԻՆ յուրահատուկ օրգանները կարող են ծառայել երեխաների բեղմնավորման և ծնունդի համար:

Երբ աղջիկը մեծանում է, նրա մարմինը դառնում է կնոջ մարմին մեծանում է կուրծքը, թևերի անութափոսերում ու սեռական շուրթերի շրջանում մազեր են աճում: Աղջկա ձվարաններում սկսում են հասունանալ մանր սեռական բջիջները, որոնք կոչվում են ձվաբջիջներ:





Երբ տղաները մեծանում են, նրա մարմինը դառնում է տղամարդու մարմին: Նրա դեմքին, թևերի անութափոսերում, առնանդամի շուրջն ու կրծքին մազեր են աճում, ծայրի տեմբրը ցածրանում է (ծայրը կոշտանում է), իսկ առնանդամն ու ամորձապարկը չափերով մեծանում են: Տղամարդու ամորձիները սկսում են արտադրել սերմնահեղուկ, որի մեջ կան շատ մանր սեռական բջիջներ՝ սպերմատոզոիդներ:




Երեխաները մեծանում ու դառնում են մեծահասակ:

Այո: Տղաները դառնում են ՏՂԱՄԱՐԴ, իսկ աղջիկները՝ ԿԻՆ:


ԻՆՉ ՇԱՏ ԵՆ ՁՎԱԲԶԻԶՆԵՐԸ, ԻՆՉ ՇԱՏ ԵՆ ՍՊԵՐՄԱՏԱԶՈՒԴՆԵՐԸ

Երեխա բեղմնավորելու համար պետք է ընդամենը երկու բան տղամարդու փոքրիկ սպերմատոզոիդ և կնոջ փոքրիկ ձվաբջիջ:




(մեծացված պատկեր)




Տղաները ծնվում են ամորձիներով, բայց ամորձիները սերմնահեղուկ չեն արտադրում, բանի դեռ տղան տղամարդ չի դարձել: Հենց այդ պատճառով փոքր տղաները չեն կարող երեխա ունենալ:



Կանանց ձվարաններում գտնվում են հազարավոր մանր ձվաբջիջներ: Նրանցից յուրաքանչյուրի չափը չի գերազանցում մատիտի ծայրով դրված կետին:



Ամիսը մեկ անգամ ձվաբջիջը դուրս է գալիս ձվարաններից և հայտնվում է երկու արգանդափողերից մեկում: Աղջիկները ծնվելիս արդեն ունեն ձվաբջիջներ, սակայն այդ ձվաբջիջները դեռ պատրաստ չեն բեղմնավորմանը, քանի դեռ աղջիկը կին չի դարձել: Հենց այդ պատճառով փոքրիկ աղջիկը չի կարող երեխա ունենալ:



Արագիլները չեն:



ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ԱՐԱԳԻԼԸ ՉԻ ԲԵՐՈՒՄ

ՉԷ՛



Հղիանալու համար անհրաժեշտ է, որ տղամարդու սպերմատոզոիդը բեղմնավորի կանացի ձվաբջիջը:



1 սպերմատոզոիդ

1 ձվաբջիջ

1 երեխա

Երբ մեծահասակներն ուզում են երեխա ունենալ, նրանք սիրով են զբաղվում, կամ, այլ կերպ ասած՝ սեքսով: Այդ ընթացքում տղամարդն ու կինն այնքան մոտ են իրար գտնվում, որ տղամարդու առնանդամը մտնում է կնոջ հեշտոց:


Դու դրան հավատում ես:

Ես չեմ ուզում այդ մասին խոյնիսկ մտածել:



Ի տարբերություն մեծահասակների, երեխաները շատ փոքր են սեքսով զբաղվելու համար:


Երբ մեծահասակները սիրով են զբաղվում, սերմնահեղուկը տղամարդու առանդամի վրա գտնվող փոքրիկ անցքից դուրս է գալիս ու հայտնվում կնոջ հեշտոցում: Այնուհետև սերմնահեղուկը հեշտոցից անցնում է արգանդ ու հասնում արգանդափողերին:



Եթե արգանդափողերում թեկուզ մեկ սպերմատոզոիդ հանդիպի ու միասնա ձվաբջջի հետ, մի հրաշալի բան տեղի կունենա՝ երեխա կբեղմնավորվի:

Երբեմն սպերմատոզոիդներին ոչ մի կերպ չի հաջողվում կնոջ մարմնում հանդիպել ձվաբջիջների: Այդ դեպքում բժիշկները կարող են տղամարդուց վերցնել սպերմատոզոիդը, կնոջից՝ ձվաբջիջը և նրանց փոքրիկ հատուկ բաժակի մեջ տեղադրել, որտեղ նրանք կարող են հանդիպել: Յետո բժիշկը այդ բեղմնավորված ձվաբջիջը կտեղադրի կնոջ արգանդի մեջ, որտեղ և կսկսի զարգանալ ապագա երեխան:

Կամ էլ բժիշկը կարող է սերմնահեղուկը տեղադրել կնոջ հեշտոցում, որտեղից սպերմատոզոիդները կգնան դեպի արգանդափողեր և կհանդիպեն ձվաբջջի:



ՄԵԾ ՆԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ


Երևի, քեզ հետաքրքիր է, թե ինչպես է սպերմատոզոիդը բեղմնավորում ձվաբջիջն:



Միլիոնավոր սպերմատոզոիդներ կնոջ հեշտոցով լողում են դեպի արգանդափողեր:



Ձվաբջիջները դուրս են գալիս ձվարաններից արգանդափողերից մեկի մեջ:



Սպերմատոզոիդները մտնում են ձվաբջիջի մեջ: Այնուհետև ձվաբջիջը փակվում է և ուրիշ սպերմատոզոիդներն չի թողնում:

Տես, ներսում է:

Դու միակն ես:

Այո, ես միակն եմ:

Տես՞ք, նրա պոչը պոկվեց:

Վերջ նավարկությանը:

Ի՞նչ, մեզ համար տեղ չկա:

Երևեկ ես լինեի նրա փոխարեն:

Չիմա կարող եմք հանգստանալ:

Սպերմատոզոիդի պոչիկը պոկվում է, քանի որ այն այլևս պետք չէ:

Երբ ձվաբջիջն ու սպերմատոզոիդը միանում են իրար, նրանք զիգոտ են ձևավորում:



Ո՞ր է գոտին:

Գոտի չի, զիգոտ է:

Չիգոտը սկսում է մեծանալ, ու դառնում է բջջային գունդ:

... և տեղափոխվում է կնոջ արգանդ:



Բարև, ես մեծանում եմ:



Արգանդափող

Գնում եմ հնգօրյա ճանապարհորդության:

ԱՐԳԱՆԴ



Ես դա արեցի:

Այստեղ այնքան տաք է ու հարմար:

ՄԵԾԱՑՈՂ ԱՐԳԱՆԴ



Երեխան մեծանում է մեծացող արգանդում: Պարզ է:




Երբ բջջային գնդիկը կաշում է արգանդին, ասում են, որ կինը հղի է: Դժվար է պատկերացնել, որ այդ փոքրիկ բջջային գնդիկը դառնում է մի ամբողջ մարդ երեխա: Բայց դա փաստ է:

Պարզ է: Նա մեծանում է արգանդում, ոչ թե ստամոքսում:



Հղի կինը կինոթատրոնում



Սոված կին

Հյուր

Ադի-բուդի

Պտուղը արգանդում

Երբ բջջային գունդը հայտնվում է արգանդում, սկզբում այն կոչվում է էմբրիոն: Հետո նրան անվանում են պտուղ:

Պտուղը հղի կնոջ ստամոքսում չի: Նա գտնվում է ստամոքսի ներքևում՝ արգանդում: Պտուղը այնտեղ կմեծանա այնքան, քանի դեռ չի պատրաստ չէ ծնվելուն:



Այսինքն պտուղը այնտեղ չի, որտեղ ադի-բուդին է հայտնվում:



Ճիշտ ես:




Այս բջջային գունդը մեծ է երևում:

ԳՆԴԱՍԵՂԻ ԾԱՅՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՉՄԵՐՈՒՎ

Իրականում այն շատ փոքր է:



Երբ բջջային փոքրիկ գունդը հասնում է արգանդին, այն դառնում է էմբրիոն: Նրա չափը չի գերազանցում գնդասեղի ծայրը:



1 ԱՄՍԱԿԱՆ.
Էմբրիոնը լուրիկի սերմի չափի է: Նրա սիրտն արդեն բաբախում է:


Երբ պտուղը ծանրուկի չափ է դառնում, արգանդը պայթում է:

Հույս ունեմ՝ չէ:

Մայրիկը գիրացել է:


Չէ, պարզապես նրա փորում երեխա կա:

Հղի կնոջ արգանդը չի պայթում, քանի որ և՛ արգանդը, և՛ մաշկը փուչիկի նման առաձգական են: Արգանդը պտուղի հետ մեծանում է աստիճանաբար, այդ իսկ պատճառով էլ արգանդում ապահով է:



3 ԱՄՍԱԿԱՆ. Էմբրիոնը մեծ դեղձի չափի է: Նա արդեն ունի ձեռքեր, ոտքեր, մատներ, ականջներ, աչքեր, քիթ ու շուրթեր: Ոտքերի և ձեռքերի մատներին եղունգներ են աճում, իսկ մարմնի վրա նուրբ մազածածկույթ է հայտնվում: Այդ ժամանակ ծնավորվում է նաև առնանդամը կամ հեշտոցը:

6 ԱՄՍԱԿԱՆ. Պտուղը կոկոսի չափի է: Նա արդեն կարող է լսել, տեսնել, ոտքերով հրել, զկրտալ և այլ բաներ: Նրա թոքերն արդեն սովորում են շնչել: Սկսում են աճել պտուղի ունքերն ու թարթիչները և նա արդեն կարողանում է բացել աչքերը:



9 ԱՄՍԱԿԱՆ. Պտուղն արդեն ձմերուկի չափի է: Ակտիվորեն աշխատում են նրա ուղեղը, սիրտը, ստամոքսն ու մյուս օրգանները: Նա պատրաստ է ծնվելուն:

ՊՈՐՏԱԼԱՐԸ

Պտուղն իր աճի և առողջության համար անհրաժեշտ բոլոր նյութերը ստանում է այն սնունդից, որն ուտում է նրա մայրիկը, ինչպես նաև թարմ օդից, որը մայրիկը շնչում է:



Օդի թթվածինը և մայրիկի կերած սննդի ու խմած հյութերի մասնիկները պտուղին են հասնում պորտալարի միջոցով, որը կպած է նրա մարմնին: Քո պորտը այն հատվածն է, որով պորտալարը քեզ կապում էր մայրիկիդ օրգանիզմին, քանի դեռ դու չէիր ծնվել:

Կնոջ արգանդը լրված է տաք հեղուկով, որը տաքացնում է փոքրիկին ու պաշտպանում նրան հարվածներից ու ցնցումներից: Երբեմն պտուղը խմում է այն հեղուկը, որով շրջապատված է և մի քիչ չիշիկ է անում: Պտուղի մեզը կնոջ օրգանիզմից դուրս է գալիս կնոջ մեզի հետ միասին: Պտուղների մեծ մասը արգանդի մեջ փուփիկ չեն անում:



ԻՆՉՊԵՍ Ե ՊՏՈՒՂՆ ՈՒՏՈՒՄ ՈՒ ՇՆՉՈՒՄ

Ուղեղը մտածում է
ինչպես անվանել
փոքրիկին

1 Թարմ օդը կնոջ օրգանիզմ է մտնում
թոքերի ու բերանի միջոցով:

2 Սնունդը, օրինակ բանանը, և հյուրերը
կնոջ օրգանիզմ են մտնում բերանի միջոցով:

3 Օդը հասնում է թոքերին:

4 Սնունդն ու հյուրերը անցնում են
ստամոքսի միջով:

5 Ստամոքսի մեջ սնունդը
մալր մասերի է բաժանվում:

6 Սնունդի մասիկներն ու օդը պտուղին
են հասնում պորտալարի միջով:

Այդպես սնվելու
համար Նույնիսկ
գդալ ու պատառաքաղ
պետք չեն:

Այսինքն պորտալարը նման
է ձողիկի: Սնունդը,
հյուրերն ու օդը պտուղին
են հասնում պորտալարի
միջոցով:

Աստղ
Արևիկ
Տաթև
Սերինե
Եվա

Թոք

Թոք

Ստամոքս


Արգանդ

Պտուղ

Սնունդ

Չարգացող շնիկներ

Չդի շուն



Ինչ է անում պտուղն ամբողջ օրը:





ԻՆՉՈ՞Վ Է ՉԲԱՂՎԱԾ ՊՏՈՒՂԸ

Եվ ինչո՞վ է զբաղված գիշերը:




Քանի դեռ պտուղը արգանդի մեջ մեծանում է, նա շատ հետաքրքիր բաներ կարող է անել: Նա կարող է ոտքերով խփել, հրել, գլուխկոնծի տալ, մատը ծծել, կուլ տալ, աչքերը թարթել, ձգել, քնել ու այնպիսի ձայներ հանել, որոնք նման են զկրտալուն կամ փռշտալուն:



Երբ պտուղը մեծանում է, նա սկսում է լսել մարդկանց և այլ ձայները, օրինակ դուրս գալիս ձայնը: Նա լսում է, թե ինչպես է բաբախում մայրիկի սրիտը, ինչ ձայներ է հանում փորը: Պտուղը նաև տեսնում է պայծառ լույսը:



Բնույն է



Ործկույն է



Չկույն է

Կարծես թե, նա
ամբողջ գիշերը և
ամբողջ ցերեկը
զբաղված է արգանդի
մեջ:




Չբաղված է
ինչպես մեղուն:



Դու կարող ես խնդրել հղի կնոջը՝
մայրիկին, մորաքրոջը կամ ընտանիքի
հարազատ ապագա մայրիկին՝ դնել ձեռքը
Նրա փորին: Երբեմն կարող ես զգալ, թե
ինչպես է պտուղը խփում կամ հրում:
Կարելի է նույնիսկ տեսնել, թե ինչպես
է նա շարժվում փորի մեջ: Դա ցավ չի
պատճառում ոչ հղի կնոջը, ոչ էլ
փոքրիկին:



ՏՂԱ՞, ԱՂՋԻ՞Կ ՄԵ՞Կ ԵՐԵԽԱ, ԹԵ՞ ԱՎԵԼ



Երբ բժիշկը կամ բուժքույրը ապագա մայրիկին ուլտրաձայնային հետազոտություն է անցկացնում, կարելի է տեսնել, թե ինչպես է պտուղը արգանդում շարժվում, խփում կամ քնած է: Երբեմն կարելի է տեսնել՝ պտուղը առնանդամ ունի, թե՞ չէ: Եթե ունի, ուրեմն տղա է ծնվելու: Եթե չկա՝

աղջիկ կծնվի: Այդպես շատ ընտանիքներ մինչև երեխայի ծնվելն իմանում են աղջի՞կ են ունենալու, թե՞ տղա:

Որոշ ծնողներ չեն ուզում նախապես իմանալ, թե ո՞վ է ծնվելու: Նրանց համար երեխայի սեռը անկանկալ է լինելու: Նրանք դա իմանում են միայն այն ժամանակ, երբ երեխան ծնվում է:

Որոշ ծնողներ ուլտրաձայնային հետազոտության ժամանակ նկար են վերցնում՝ հարազատներին ցույց տալու համար:


Ուլտրաձայնային հետազոտության ժամանակ բժիշկը կամ բուժաշխատողը տեսնում են, թե քանի՞ պտուղ կա հղի կնոջ արգանդում՝ մեկ, երկու կամ ավել:



Պտուղի համակարգչային նկարը






Օհո՛:
Համակարգիչը տեսնում է, թե ինչ է կատարվում արգանդում:



Ես չեմ ուզում որևէ մեկի մարմնի ներսը տեսնել:

Սովորաբար արգանդում զարգանում է միայն մեկ պտուղ: Բայց երբեմն դրանք կարող են լինել երկու, երեք և նույնիսկ ավելի շատ:



Եթե արգանդում զարգանում է երկու պտուղ, ապա ծնվում են երկվորյակներ: Եթե պտուղները երեքն են, ծնվում են եռյակներ: Եթե չորսն են՝ քառյակներ, հինգի դեպքում՝ հնգյակներ:

Որոշ երկվորյակներ, եռյակներ, քառյակներ կամ հնգյակներ իրար շատ նման են լինում, իսկ որոշ դեպքերում՝ ոչ:

Երկվորյակները, եռյակները, քառյակներն ու հնգյակները կարող են լինել ինչպես նույն սեռի, այնպես էլ տարբեր սեռ ունենան:





Ես ծնվել եմ բնում: Այնտեղ շատ հարմար էր:

ՍԱ ԵՐԵԽԱ Է



Իսկ ես ծնվել եմ փերթակում: Այնտեղ շատ տաք էր:

Երեխաների մեծ մասը ծնվում է հիվանդանոցներում: Բայց որոշ երեխաներ ծնվում են տանը: Մեծամասամբ երեխայի ծնվելու ժամանակ մայրիկին օգնում են հատուկ մարդիկ՝ բժիշկներն ու մանկաբարձները: Երբեմն մայրիկին օգնում է հայրիկը, մորաքույրը, մորեղբայրը, տատիկը պապիկի հետ կամ այլ մտերիմ ընկերներ:

Երբ երեխան պատրաստ է լինում ծնվելու, մայրիկի արգանդի մկանները հեշտոցի միջով դուրս են հրում փոքրիկին: Հեշտոցը խիստ ձգվում է, որպեսզի փոքրիկը կարողանա նրա միջով անցնել և լույս աշխարհի գալ, այսինքն՝ ծնվել: Երեխաների մեծ մասը ծնվում է այդպես:



Ինչպե՞ն է ծնվում փոքրիկը: Կարծում ես, նա դուրս է գալիս, երբ մայրիկը փութի՞ն է անում:

Չէ, ես այդպես չեմ մտածում:



Երբեմն անհրաժեշտություն է լինում, որ բժիշկը մայրիկի փորի մաշկն ու արգանդը սուր գործիքով կտրի ու այնտեղից հանի փոքրիկին: Վիրահատությունից առաջ մայրիկին հատուկ դեղեր են տալիս, որպեսզի նա ցավ չզգա: Երբ բժիշկը մայրիկի փոքրը կտրում է, արգանդի միջից հանում է երեխային: Այնուհետև այդ կտրվածը կարում է հատուկ թելերով:

Որոշ երեխաներ հենց այդպես են լույս աշխարհ գալիս: Այդպիսի վիրահատությունը կոչվում է «կեսարյան հատում»:

Դու կարող ես քո ծնողներին հարցնել՝ որտե՞ղ ես ծնվել դու՞ տա՛նը, թե՞ հիվանդանոցում:

Երբ փոքրիկը ծնվում է, մեկը անպայման գոռում է՝ «ԱՂՁԻ՛կ է» կամ «ՏՂԱ՛ է», նույնիսկ այն դեպքում, երբ ծնողները նախապես գիտեին երեխայի սեռը: Երեխայի ծննդյան պահը շատ հուզիչ է:

Ես ձվից եմ դուրս եկել: Ես այդպես եմ ծնվել:




Ես էլ եմ ձվից դուրս եկել:



ԾՆՈՒՆԴԴ ՇՆՈՐՀԱԿՈՐ

Ծնունդ,
շնորհավոր:



Ծնունդ,
շնորհավոր
փոքրիկ:



Երեխաների մեծ
մասը սկսում է լացել
անմիջապես ծնվելուց
հետո: Նորածնի թոքերը
բացվում ու օդով են լցվում
առաջին ճիշի ժամանակ:
Այդպես երեխան սկսում է
ինքնուրույն շնչել: Երբ փոքրիկը
ծնվում է, պորտալարը, որը
միացնում է մայրիկին ու փոքրիկին,
կտրում են: Դա ցավ չի պատճառում ոչ
մայրիկին, ոչ էլ փոքրիկին:

Պորտալարը կտրում են, քանի որ նորածինն արդեն կարող է ինքնուրույն շնչել: Բացի այդ, նա կարող է կաթ խմել մայրիկի կրծքից կամ շշով: Նորածնի համար լավագույն սնունդը մայրիկի կաթն է: Սակայն, եթե մայրիկը չի կարող կրծքով կերակրել փոքրիկին, ապա նա նորածնին կերակրում է հատուկ կաթնային խառնուրդով:

Այն մասը, որտեղ ամրացած էր պորտալարը, դառնում է պորտ: Հենց պորտալարը կտրում են (իսկ երբեմն ավելի շուտ) ծնողները վերջապես կարող են գրեկլ ու համբուրել նորածնին: Փոքրիկին գրկելն ու նրան նայելը շատ հաճելի է:

Այն օրը, երբ դու ծնվում ես, դառնում է քո ծննդյան օրը, և այն երբեք չի փոխվում: «Ծնվել» բառը նշանակում է ինչ-որ նոր բանի լույս աշխարհ գալը: Յուրաքանչյուր տարի քո ծննդյան օրը բոլորը շնորհավորում են քեզ, որովհետև նրանք շատ ուրախ են, որ դու լույս աշխարհ ես եկել:

Իմ հարազատները
այնքան էին
ուրախացել իմ
ծնվելուց: Նրանք ինձ
գրկել ու ասում էին՝



Իմ ընտանիքն էլ էր
շատ ուրախացել իմ
ծնունդով: Ինձ գրկել
ու ասում էին՝ քնքուշիկ:



ԳՐԿԱԽԱՌՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀԱՄԲՈՒՅՐՆԵՐ




Նորածինները միայն լացում են, քնում, չիշիկ ու փուֆիկ անում:



Դա նորմալ է: Փոքրիկները քնած ժամանակ մեծանում են:



Համեմատաբար մեծ երեխաները չեն հիշում, թե ինչպիսին են նրանք եղել նորածին ժամանակ:
Խնդրիր ծնողներիդ ցույց տալ քո լուսանկարները, որտեղ դու դեռ շատ փոքր ես: Խնդրիր նրանց պատեմլ, թե ի՞նչ էիր կարողանում անել այդ տարիքում ու ի՞նչ տեսք ունեիր: Եթե նայես նորածնին, կհասկանաս, որ նա շատ բաներ կարող է անել: Նորածինները շուտ են հոգնում, քանի որ նրանք շատ զբաղված են: Հենց այդ պատճառով նրանք շատ են քնում ու լացում:
Նորածինները լացում են, երբ սոված են կամ հոգնած: Նրանք լացում են նաև այն ժամանակ, երբ չիշիկ են արել կամ փուֆիկ, և անհրաժեշտ է փոխել տակաշորը:



Երբ նորածինները սոված են, նրանք մայրիկի կրծքից կամ շնով հատուկ կաթ են խմում: Փոքրիկները լացում են, երբ իրենց միայնակ են զգում ու մայրիկի քնքշանքն են ուզում և կամ երբ նրանք շոգում են կամ մրսում: Լացի օգնությամբ նրանք մեզ ասում են, թե ի՞նչ են ուզում կամ ի՞նչ են զգում:



Չնայած նորածինները կարող են տեսնել ու լսել, նրանց անհրաժեշտ է, որ իրեն խնամեն ուրիշ մարդիկ՝ մայրիկը, հայրիկը, մորթույրներն ու հորեղբայրները, տատիկներն ու պապիկները, բուժքույրները կամ դայակները: Մեծ եղբայրներն ու քույրիկները կարող են օգնել փոխել նորածնի տակաշորը, նրան լողացնելուց կամ կերակրել փոքրիկին, երբ նա մի քիչ մեծանա: Նրանք նաև կարող են զանազան խաղեր խաղալ փոքրիկի հետ :



Նորածինները սիրում են, երբ եղբայրներն ու քույրիկները գրկում ու համբուրում են նրանց, նրանք ժպտում են, երգում կամ խոսում նրանց հետ, ինչպես կարող են: Նորածիններին հաճելի է լինել իրենից մեծերի հետ:

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ես լավ ընտանիք ունեմ:



Իսկ ես հրաշալի ընտանիք ունեմ:



Երեխաների մեծ մասը ապրում է ընտանիքում, որտեղ իրենց սիրում ու հոգ են տանում նրանց մասին: Նրանցից ոմանք ծնվում են այդ ընտանիքներում, իսկ ոմանց որդեգրում են:



Որոշ ընտանիքներում ընդամենը մեկ երեխա կա: Ուրիշ ընտանիքներ ունեն երկու, երեք, չորս և նույնիսկ ավելի շատ երեխաներ: Որոշ ընտանիքներում կան մայրիկ ու հայրիկ: Ուրիշ ընտանիքներում կա միայն մայրիկ կամ հայրիկ: Որոշ երեխաներ ապրում են մեկ հարազատ և մեկ ոչ հարազատ ծնողների հետ, կամ մորաքույրների, հորեղբայրների, տատիկների, պապիկների կամ որդեգրած ծնողների հետ: Կան նաև երեխաներ, որոնք որոշ ժամանակ ապրում են մի ծնողի հետ, իսկ որոշ ժամանակ մյուս ծնողի հետ:



Պատահում է, որ մեկ կամ երկու ծնողներն
 Էլ չեն կարող հոգ տանել իրենց երեխայի
 մասին: Այդ դեպքում նրան երեխային տանում
 են մանկատուն: Իհարկե, հիմնականում
 ծնողները երեխային մանկատուն են տանում
 այլ Էլք չունենալուց՝ չունեն փող, տուն,
 աշխատանք կամ հիվանդ են:



Կան վատ ծնողներ, որոնք իրենց երեխայի
 մասին հոգ չեն տանում: Այդպիսի ծնողներից
 հատուկ սոցիալական աշխատողները
 երեխաներին վերցնում են:

Շատ դեպքերում, եթե բախտը ժպտա
 փոքրիկին, երեխան կարող է մանկատանից այլ
 ընտանիք գնալ, որտեղ նրան կսիրեն ու
 հոգ կտանեն նրա մասին: Այդ երևույթը
 կոչվում է «որդեգրում»:

Որդեգրումը նոր
 ընտանիք ունենալու
 համար լավ
 հնարավորություն
 է:

Ծնողները, երեխայի հարազատ քույրերն ու
 եղբայրները, զարմիկներն ու զարմուհիները,
 մորաքույրերն ու հորաքույրները,
 մորեղբայրներն ու հորեղբայրները,
 տատիկներն ու պապիկները երեխայի
 ընտանիքի անդամներն են:



Այնքան
 տարբեր, բայց
 լավ
 ընտանիքներ
 կան:



ԼԱՎ ԵՎ ՎԱՏ ՀՊՈՒՄՆԵՐ

Նորածիններին, փոքրիկներին, դեռահասներին ու մեծերին անհրաժեշտ են գրակախանումներ ու համբույրներ այն մարդկանցից, ովքեր սիրում ու լավ են վերաբերվում նրանց: Ընտանիքի անդամների ու հարազատ մարդկանց ամենօրյա գրկախանումներն ու հպումները համարվում են լավ հպումներ: Անհրաժեշտ է տարբերել լավ ու վատ հպումները:

Մեր մարմինների այն հատվածները, որոնք գտնվում են ներքևաշորերի տրուսիկների, լողազգեստների տակ, կոչվում են ինտիմ հատվածներ: Եթե դու ձեռք ես տալիս կամ քորում ես քո մարմնի ինտիմ հատվածները, երբ դրանք քոր են գալիս, դա նորմալ է:

Իմ մարմնի ինտիմ հատվածները թաքնված են փետուրների տակ:



Ինձ համար իմ մարմնի բոլոր մասերը ինտիմ են:



Բժշկական գննության ժամանակ բժիշկը կամ բուժքույրը նայում կամ դիպչում են քո ինտիմ մասերին, որպեսզի վստահ լինեն, որ դու առողջ ես: Բժշկի կամ բուժքրոջ այդպիսի հպումները ևս նորմալ են:



Մի՛ սրմ
 ՊԵՏՔ ՉԻ
 ՈՉ



Եթե որևէ մեկը ծեռք է տալիս քո մարմնի ինտիմ հատվածներին կամ մարմնի ցանկացած հատվածին ու քեզ այդպիսի հպումները դուր չի գալիս, այդ հպումները համարվում են վատը: Եթե այդպիսի բան տեղի ունենա քո հետ, ապա առաջին մարդուն «ՈՉ», «ՄԻ՛ ՍՐՄ», «ՊԵՏՔ ՉԻ», նույնիսկ այն դեպքում, եթե դա անում է քո ընտանիքի անդամը, քեզ հարազատ կամ ծանոթ մարդ, որը քեզնից ավելի մեծ ու

ուժեղ է:

Եթե որևէ մեկը դիպել է քեզ այն հատվածներում, որտեղ պետք չէր կպնել, այդ մասին անմիջապես պատմիր ծնողներին: Կամ այլ հարազատ մեծահասակների, նույնիսկ եթե խնդրել են քեզ դա գաղտնիք պահել: Այդ գաղտնիքն անպայման պետք է պատմել հարազատ մեծահասակներին:

Պատմիր այդ մասին ընտանիքիդ անդամներին, ուսուցչին, բժշկին, բուժքրոջը կամ այն մեծահասակի, ում շատ լավ են ճանաչում: Եթե այդ մարդը քեզ չօգնի կամ չհավատա, պատմիր մեկ ուրիշ մեծի, մինչև որևէ մեկը կհավատա ու կվստահի քո խոսքերին: Այդ մարդը կանի ամեն ինչ՝ նմանատիպ վատ հպումներից քեզ պաշտպանելու համար: Բարեբախտաբար, քո շուրջը շատ մեծահասակներ կան, ովքեր անպայման կօգնեն քեզ:

Ես դեռևս այնքան փոքր եմ:


Բայց դու բավականաչափ մեծ ես, որպեսզի կարողանաս ասել «ՈՉ», «ՄԻ՛ ՍՐՄ» կամ «ՊԵՏՔ ՉԻ»:



Այնքան վախենալու է այդ մասին խոսելը:

Երբ ես խոսում եմ այդ մասին, ես թեթևանում եմ: Ուզո՞ւմ ես, գրկեմ քեզ:

Այո՛... իմ սիրելի՛ ընկեր:



Այդքան պինդ չէ, բարեկամս:

Ես սիրում
եմ իմ
ընկերներին:

Ուրեմն, դու
սիրել գիտես:

ՏՂԱՆԵՐ, ԱՂՋԻԿՆԵՐ, ԸՆԿԵՐՆԵՐ



Երբ երեխան մեծանում է, սկսում է
ընկերներ ծեռք բերել: Կարևոր չէ, թե
քանի ընկեր ունես կամ ում հետ ես
ընկերացել աղջիկների, տղաների, թե և
աղջիկների, և տղաների: Կարևորը լավ
ընկերներ լինել:

Որպեսզի լավ ընկերներ լինեք,
անհրաժեշտ է կիսվել խաղալիքներով,
իրար հետ խաղեր խաղալ, լինել բարի
ընկերոջ նկատմամբ ու ապրումակցել,
երբ նա տխուր է կամ վատ է զգում
իրեն:


Ա՛յ

Կներես



Ինձ ընդհանրապես
դուր չի գալիս, երբ
որևէ մեկը պոկում է
իմ փետուրները:
Փոխարենը ես սիրում
եմ գրկախառնվել:

Ինձ ընդհանրապես դուր չի
գալիս, երբ որևէ մեկն
ուզում է ինձ ճգմել: Բայց
ինձ հաճելի է, երբ ինձ
համբուրում են, երբ ես
քերծել եմ իմ թևիկները:




Որպեսզի լավ ընկեր լինես, պետք է
սովորես ներողություն խնդրել, երբ
մեղավոր ես, գրկել ընկերոջը,
բռնել նրա ծեռքը կամ պարզապես
զրուցել նրա հետ:



Եթե դու չես ուզում, որ ընկերդ քեզ գրկի, համբուրի կամ ձեռքդ բռնի, պարզապես ասա նրան այդ մասին: Ոչ մի վատ բան չկա նրա մեջ, որ ընկերդ չի ուզում, որ դու այդ պահին բռնես նրա ձեռքը, գրկես կամ համբուրես: Լավ ընկերները միշտ լսում են ու ընդունում իրենց ընկերների ցանկությունները:

Եթե քո ընկերը խնդրում է անել մի բան, որը դու չես ուզում անել կամ չպետք է անել, օրինակ շատ բարձր տեղ բարձրանալ, որևէ մեկին բարկացնել կամ հագուստը հանել, պարզապես նրան ասա. «Ոչ, ես դա չեմ անի» կամ «Ես չեմ ուզում դա անել», նույնիսկ այն ժամանակ, եթե ընկերդ պնդում է:



Դու չպետք է անես այն ամենը, ինչ խնդրում է քո ընկերը: Ընկերները կարող են զբաղվել տարբեր բաներով ու նույնիսկ բարկանալ միմյանց վրա: Բայց, չնայած դրան, շատ լավ է, երբ ընկեր ունես:

Չեմ համբերում,
թե երբ եմ
մեծանալու:



Ես ինձ դուր
եմ գալիս այնպես,
ինչպես կամ: Չեմ
ուզում մեծ լինել:

ՄԵԾԱՆՈՒՄ ԵՆՔ

Դու մեծանում ես: Առաջ դու նորածին էիր, իսկ այժմ մեծացել ես: Շուտով կդառնաս դեռահաս: Դժվար է հավատալ, որ որոշ ժամանակ անց դառնալու ես մեծահասակ: Միգուցե դու ցանկանաս դառնալ մայրիկ կամ հայրիկ: Իսկ երբ ավելի մեծանաս, կդառնաս տատիկ կամ պապիկ:

ՄԵԾԱՆԱԼԸ ԱՅՆՔԱՆ ՀԵՏԱՔՐԲԻՐ Է





Երբ աղջիկները մեծանում են, նրանք դառնում են կին, իսկ տղաները՝ տղամարդ: Մեծանալու համար քեզ շատ ժամանակ է պետք:

ՄԵԾԱՆԱԸ ԱՅՆՔԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է



ՀԱՎԱՏԱՎ





Այնուամենայնիվ,
ինչքան
հետաքրքիր է
մարդու մարմինը:

Չերիք է այդ
մասին խոսենք:
Համենայն դեպս
հիմա: